Պետրոս Դուրյան

Մնաս բարյավ

Առտու մը դեռ մթնշաղ՝
Կրծավալվեր շող ու շաղ,
Ծաղկանց մեջ քեզ տեսա ես,
Կրժպտեիր լուսնո պես:

Աչերդ սիրո ատրուշան,
Մատներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքեդ ծներ նոր եթեր:

Սիրտս թռա՜վ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ…
Սիրով եղան ձյուն մազեր,
Ըսին՝ կյանքը երազ էր:

Մինչդեռ դու չես սիրեր զիս,
Մ'իշխեր գոնե տկար սրտիս.
Ուր որ երթամ, դեմքդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ… մահո՜ւ նետ:

Երբ անտառին խորրն նսեմ
Կերթամ լալ՝ լուռ մենաձեմ,
Դարձյալ հոն կրգտնես զիս,

Տերևներեն կխոսիս:

Երբ առվակին եզերքը՝
Ներստիմ սփոփել իմ վերքը՝
Դարձյալ դու կըգտնես զիս,
Ալյաց մեջեն կժպտիս:

Երբ լեռները կըփախչիմ,
Որ չտեսնեսնեմ քեզ, հանգչիմ,
Հողմույն մեջեն կըխոսիս,
Թե՝ դու բնավ չես սիրեր զիս:

Լուսնի լույսով գիշերը
Երբ ցողեն իմ աչերը,
Դարձյալ դու կըգտնես զիս,
Աստղերուն մեջ կըժպտիս:

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չգտնեմ…
Մնաս բարյա՛վ… հայուհիս,
Անգո՛ւթ, արցունք մ'ալ չունիս: